

**ԹԱՓԱՌԱՇՐՁԻԿ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ
ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴԻ
ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ**

Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի սահմանադրական նորմերը, մեր կարծիքով, համահունչ են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 5-րդ հոդվածին և բխում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային դատական ակտերում արտացոլված իրավական դիրքորոշումներից: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 16-րդ հոդվածը, ի թիվս այլ հիմքերի, ազատությունից զրկելու իրավական հնարավորություն է նախատեսում վարակիչ հիվանդությամբ տառապող, հոգեկան հիվանդ, գինեմոլ, թմրամոլ և թափառաշրջիկ անձանց նկատմամբ: Ընդ որում, այն պետք է պայմանավորված լինի վերջիններից բխող հասարակական վտանգը կանխելու անհրաժեշտությամբ: Վերը նշված անձանց պարագայում ընդհանուրն այն է, որ գործ ունենք հասարակության որոշակի խոցելի շերտի ներկայացուցիչների հետ, որոնք վտանգ են ներկայացնում ոչ միայն հասարակության համար, այլև իրենց կենսակերպով կարող են վտանգել սեփական կյանքն ու առողջությունը: Նրանք, որպես կանոն, օբյեկտիվ պատճառներով ի վիճակի չեն անձամբ իրականացնել իրենց իրավունքները, ինչի արդյունքում հայտնվում են խոցելի իրավիճակում, և այս առումով ավելի է կարևորվում միջամտության տեսքով պետության աջակցությունը:

Միջազգային պրակտիկայում ընդունված է թափառաշրջիկ համարել այն անձանց, ովքեր չունեն բնակության մշտական վայր, գոյության միջոցներ և որոշակի զբաղմունք կամ մասնագիտություն²:

¹ ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. դեկավար՝ ի. գ. թ., դոցենտ Վ. Այվազյան:

² St u Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «De Wilde, Ooms and Versyp («Vagrancy») v. Belgium» գործը (Գանգատներ թիվ 2832/66, 2835/66, 2899/66, 18.06.1971 թ.):

Թափառաշրջիկ անձանց կարգավիճակի, մասնավորապես՝ նրանց նկատմամբ հարկադրանքի միջոցներ կիրառելու հիմքերի ու սահմանների առնչությամբ պետությունների իրավական մոտեցումները տարբերվում են: Կան երկրներ, որտեղ թափառաշրջիկության որոշ առավել վտանգավոր դրսևորումներ քրեորեն պատժելի են: Օրինակ ԱՄՆ-ում քրեականացված են թափառաշրջիկության առավել ագրեսիվ տեսակները, ինչպիսին է, օրինակ, «կաշուն մուրացկանությունը»¹: Կանադայում ևս քրեական պատասխանատվություն է նախատեսված թափառաշրջիկության համար: Սակայն այստեղ թափառաշրջիկ եզրույթը տարբերվում է դասական բնորոշումներից: Մասնավորապես՝ Կանադայում թափառաշրջիկ է համարվում յուրաքանչյուր ոք, ով ամբողջությամբ կամ մասամբ իր գոյությունն ապահովում է մոլեխաղերի կամ հանցագործության միջոցով և չունի օրինական մասնագիտություն կամ նախկինում դատապարտվել է Քրեական օրենսգրքի առանձին հոդվածներով, որոնք պատասխանատվություն են նախատեսում լուրջ անձնական վնասի համար, և մուրացկանությամբ են զբաղվում դպրոցների մերձակայքում, խաղահրապարակներում, հանրային զբոսայգիներում կամ ծովափնյա տարածքներում²: Գերմանիայի քրեական օրենսգրքը ևս ի սկզբանե պատժելի էր համարում մուրացկանությունն ու թափառաշրջիկությունը: Թափառաշրջիկության համար անձին սպառնում էր մինչև վե ս ամիս ժամկետով ազատազրկում: Սակայն հետագայում 1947 թ., քրեաիրավական բարեփոխումների շրջանակներում կատարված փոփոխությունների արդյունքում նշված արարքներն ապաքրեականացվեցին³: Բոլոր դեպքերում ներկայումս պետությունների մեծ մասը փոխել է այդ երևույթի նկատմամբ իր վերաբերմունքը՝ համարելով, որ այն ոչ միայն խախտում է անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը, այլև որոշ դեպքերում հակասում է

¹ Տե՛ս Լուիզիանա նահանգի Քրեական օրենսգրքը, հոդվ. 107, <http://law.justia.com/codes/louisiana/2011/rs/title14/rs14-107>:

² Տե՛ս Կանադայի 1985 թ. Քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածը: <http://laws-lois.justice.gc.ca/eng/acts/C-46/page-96.html#docCont>:

³ Տե՛ս Bettelei und Landstreicherei im Grossherzogtum Baden und im Königreich Württemberg, Reinhard Güll, Statistisches Monatsheft Baden-Württemberg 12/2013, http://www.statistik.baden-wuerttemberg.de/veroeffentl/Monatshefte/PDF/Beitrag13_12_09.pdf: Strafgesetzbuch von BRD, §361:

յուրաքանչյուրի՝ ազատ տեղեաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունքին: Օրինակ՝ 2010 թ. Ուկրաինայի Սահմանադրական դատարանն անձնական ազատության և անձեռնմխելիության, ինչպես նաև ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունքների պահանջներին հակասող ճանաչեց թափառաշրջիկության հիմքով անձին ձերբակալելու և ազատությունից զրկելու ոստիկանության մարմնի իրավասությունը:

Եվ չնայած այն հանգամանքին, որ ներկայումս նկատվում է թափառաշրջիկություն երևույթի նկատմամբ պետությունների վերաբերմունքը մեղմացնելու միտում, այդուհանդերձ, նշված հանգամանքը չի վերացնում թափառաշրջիկ անձանց նկատմամբ հարկադրանքի կիրառման և ազատությունից զրկելու անհրաժեշտությունը:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 5-րդ հոդվածը, որպես անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքից բացառություն, նշում է անձանց օրինական կալանքի վերցնելը՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև հոգեկան հիվանդներին, գինեմոլներին կամ թմրամոլներին կամ թափառաշրջիկներին օրինական կալանքի վերցնելը: Սակայն ՀՀ Սահմանադրությունը, ի տարբերություն Կոնվենցիայի, սահմանել է ազատությունից զրկելու նպատակը, այն է՝ նշված անձանցից բխող հասարակական վտանգը վերացնելու անհրաժեշտությունը: Այսինքն՝ ելակետ է ընդունվել այն, որ թափառաշրջիկ անձինք ինքնին կարող են հասարակական վտանգ չներկայացնել: Մինչդեռ, ինչպես ցույց է տալիս տալիս միջազգային փորձը, հարկադրանքի կիրառման անհրաժեշտություն կարող է առաջանալ անկախ այդպիսի վտանգից՝ նաև սեփական շահերի պաշտպանության նպատակով:

Թափառաշրջիկ անձանց մասով Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան հարուստ չէ, այդուհանդերձ, վարակիչ կամ հոգեկան հիվանդների, գինեմոլների և թմրամոլների մասին Եվրոպական դատարանի պրակտիկան, որոշ վերապահումներով, թույլ է տալիս համապատասխան հետևություններ անել նաև թափառաշրջիկ անձանց վերաբերյալ: Պայմաններից մեկը, որը կարող է հիմք հանդիսանալ թափառաշրջիկ անձանց նկատմամբ սահմանափակումներ կիրառելու համար, վերջիններիս հասարակական

վտանգավորությունն է, ընդ որում, զուտ թափառաշրջիկությամբ զբաղվելու փաստն ինքնին հիմք չէ ազատությունից զրկելու համար: Եվրոպական դատարանը նշում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածով նախատեսված անձանց թույլատրվում է զրկել ազատությունից բուժման կամ սոցիալական քաղաքականությամբ պայմանավորված նկատառումներով կամ բժշկական կամ սոցիալական ցուցումների հիմքով¹: Ազատությունից զրկելը բացառապես անձին մեկուսացնելու նպատակով հակասում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի պահանջներին, մյուս կողմից, հասարակական վտանգավորության առկայությունը որոշելու համար ամեննին պարտադիր չէ, որ թափառաշրջիկությունը՝ որպես պատժելի արարք, նախատեսված լինի օրենքով: Այդ մասին է վկայում Եվրոպական դատարանի մոտեցումը թմրամոլ և գինեմոլ անձանց դեպքում: Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ գինեմոլ (*алкоголик*) եզրույթը չի ենթադրում բացառապես սպիրտային խմիչքներից կախվածություն: Ավելին, պարտադիր չէ անձի՝ որպես գինեմոլ ախտորոշման առկայությունը: «Գինեմոլ» եզրույթը ներառում է այն անձանց, որոնց վարքագիծն ու գործունեությունն ալկոհոլ օգտագործած վիճակում վտանգ է ներկայացնում հասարակության կամ հենց իր համար²: Մա նշանակում է, որ վարչական մարմինն իրավասու չէ հարկադրանք կիրառել և ազատությունից զրկել անձին՝ զուտ ալկոհոլային հարբածության վիճակում գտնվելու պատճառով: Այստեղ վճռորոշն այն վտանգն է, որը ներկայացնում է անձն ալկոհոլային հարբածության վիճակում: Նույն մոտեցումը, կարծում ենք, կիրառելի է նաև թափառաշրջիկ անձանց նկատմամբ: Թափառաշրջիկության պարագայում գործում է այն կանխավարկածը, որ այն հանրորեն վտանգավոր չէ, սակայն առանձին դեպքերում այն կարող է վտանգավոր դրսևորումներ ձեռք բերել՝ նպաստել հանցագործությունների կամ վարչական զանցանքների կատարմանը կամ առաջացնել հասարակական կարգին սպառնացող այլ բացասական դրսևորումներ:

Այսպիսով՝ ազատությունից զրկելու նշված իրավական հիմքը

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Witold Litwa v. Poland» գործը, կետ 60 (Գանգատ թիվ 26629/95, 04.04.2000 թ.):

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Witold Litwa v. Poland» գործը (Գանգատ թիվ 26629/95, 04.04.2000 թ.):

չի ներառում գուտ թափառաշրջիկ, գինեմոլ կամ թմրամոլ լինելու հանգամանքը. ազատությունից զրկելը կարող է իրավաչափ համարվել միայն վերջիններից բխող հասարակական վտանգը կանխելու անհրաժեշտություն առաջանալու պարագայում:

Հաջորդ պայմանը, որը կարող է հիմք հանդիսանալ թափառաշրջիկ անձանց նկատմամբ հարկադրանք կիրառելու համար, մասնավոր շահերի պաշտպանությունն է: «Litwa v. Poland» գործով Եվրոպական դատարանը նշում է, որ այն անձինք, որում վարքագիծը և գործունեությունն ակոհող օգտագործած վիճակում վտանգ է ներկայացնում հասարակական կարգին կամ հենց իր համար, կարող են ազատությունից զրկվել հանրության կամ սեփական շահերի պաշտպանության նպատակով, ինչպիսիք են առողջությունը և անձնական անվտանգությունը¹: Եվրոպական դատարանը համանման դիրքորոշում է արտահայտել նաև հոգեկան հիվանդ անձանց վերաբերյալ: Հոգեկան հիվանդ անձի հարկադիր մեկուսացումն, ըստ Եվրոպական դատարանի՝ ուղղված է ոչ միայն հասարակության, այլև հենց սովյալ անձի շահերի պաշտպանությանը, որն առողջական վիճակի պատճառով կարող է վնասել նաև ինքն իրեն: Հոգեկան հիվանդության բնույթը և աստիճանը պետք է լինեն այնպիսին, որ արդարացնեն անձի հարկադիր հոսպիտալացումը: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ հոգեկան հիվանդ անձի մեկուսացումը վերջինիս պետք է հետապնդի առավելապես բուժելու նպատակ²:

Միաժամանակ, եթե հոգեկան հիվանդ, թմրամոլ և գինեմոլ անձանց պարագայում հանրության կամ մասնավոր շահերի պաշտպանությունը պահանջում է անձի լիակատար մեկուսացում հասարակությունից, որը հավասարազոր է ազատությունից զրկելուն, ապա նույնը չի կարելի ասել թափառաշրջիկ անձանց մասին այն դեպքում, երբ հարկադրանքի կիրառումը հետապնդում է վերջիններիս շահերի պաշտպանության նպատակներ: Եվրոպական դատարանը ազատությունից զրկելը տարանջատում է տեղաշարժվելու ազատության սահմանափակումից: Վերջիններիս նկատմամբ Կոնվեն-

¹ Տե՛ս նույն գործը:

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Winterwerp & Varbanov v. Bulgaria» գործը (Գանգատ թիվ 31365/96, 05.10. 2000 թ.):

ցիայի 5-րդ հոդվածի դրույթները կիրառելի չեն: Դրանց միջև տարբերությունը կայանում է ոչ թե կիրառվող միջոցների բնույթում, այլ դրանց խստության աստիճանի մեջ: Յուրաքանչյուր դեպքում գործի հանգամանքները պետք է մանրամասն ուսումնասիրվեն: Մակայն կան որոշակի չափանիշներ, ինչպիսիք են՝ կիրառվող միջոցների ձևը, տևողությունը, ազդեցությունը և իրականացման եղանակները: Մասնավորապես՝ առանձնացվում են հետևյալ կետերը՝

- հարկադրանքի միջոցների խստությունը,
- մեկուսացման տարածքը (որքան փոքր է տարածքը, այնքան մեծ է հավանականությունը, որ կիրառվող միջոցները կընկալվեն, որպես ազատությունից զրկում), ինչպես նաև խստության ռեժիմը,
- հսկողական միջոցառումների իրականացման հաճախականությունը և դրանցով պատճառվող անհանգստության աստիճանը,
- արտաքին աշխարհի հետ թույլատրելի կապերի աստիճանը և դրանց նկատմամբ վերահսկողությունը,
- այդպիսի միջոցների կիրառման տևողությունը¹:

Այսպես, թափառաշրջիկ անձանց տեղավորումը կացարաններում, որը, որպես կանոն, ժամանակավոր բնույթ է կրում և չի ենթադրում արտաքին աշխարհի հետ վերջիններիս շփումների վերահսկում, չի կարող հավասարեցվել դասական իմաստով ազատությունից զրկելու հետ: Նման դեպքերում ուժի կիրառումն ուղղված է ազատության որոշակի սահմանափակմանը:

Այսպիսով, Կոնվենցիան թույլատրում է զրկել ազատությունից ոչ միայն այն դեպքում, երբ անձը վտանգ է ներկայացնում հասարակության անվտանգությանը, այլև երբ ազատությունից զրկելը պայմանավորված է մասնավոր շահերը պաշտպանելու անհրաժեշտությամբ: Հետևաբար՝ ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածով նախատեսված՝ հասարակական վտանգը կանխելու անհրաժեշտությունը չի ամբողջացնում նույն հոդվածում նշված անձանց, այդ թվում՝ թափառաշրջիկների նկատմամբ ուժ կիրառելու և ազատությունից զրկելու իրավաչափ նպատակները: Թերևս այդ խնդիրը փորձ է արվել լուծել ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծով, որտեղ որպես անձնական ազատության և անձեռնմխելիության ի-

¹ St' u Council of Europe, Право на свободу и личную неприкосновенность в рамках Европейской конвенции о защите прав человека (статья 5), руководство для юриста, 2007թ., կետ 2.1:

րավունքից բացառություն, նշվել է հոգեկան հիվանդ, գինեմոլ և թմրամոլ անձանցից բխող վտանգը վերացնելու անհրաժեշտությունը: Մյուս կողմից՝ ներկայումս ՀՀ Ազգային ժողովի կողմից հավանության արժանացած ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծով բացառվել է թափառաշրջիկ անձանցից բխող վտանգը վերացնելու հիմքով նրանց նկատմամբ ուժ կիրառելու և ազատությունից զրկելու իրավական հնարավորությունը:

Առաջին հայացքից կարող է թվալ, որ թափառաշրջիկ անձանց ազատությունից զրկելու իրավական հիմքի բացառումը մարդասիրական բնույթ է կրում: Սակայն ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածից թափառաշրջիկ անձանց ազատությունից զրկելու իրավական հնարավորության բացառումը ոչ միայն թույլ չի տալիս կանխել վերջիններից բխող հասարակական վտանգը, այլև անհրաժեշտության դեպքում իրականացնել իրենց իսկ շահերի պաշտպանությունը: Խնդիրը նրանում է, թե արդյո՞ք պետությունը պարտավոր է իր նախաձեռնությամբ միջոցներ ձեռնարկել թափառաշրջիկ անձանց առանձին իրավունքների պաշտպանության ուղղությամբ:

Ընդ որում, խնդիրը հարկ է քննարկել նաև կյանքի և սոցիալական իրավունքների առողջության պահպանման, բնակարանային ապահովման իրավունքների համատեքստում: Եթե հարցը քննարկենք սոցիալական իրավունքների՝ առողջության պահպանման իրավունքի, բնակարանի իրավունքի համատեքստում, ապա այստեղ սոցիալական իրավունքների ապահովման հարցում պետության պարտավորվածության աստիճանը, հիմնական այլ իրավունքների համեմատ, առավել ցածր է: Սոցիալական իրավունքների ապահովումը անմիջականորեն պայմանավորված է պետության ֆինանսական հնարավորություններով: Այդ պատճառով էլ սոցիալական իրավունքներին հաճախ հիմնական իրավունքի կարգավիճակ չի տրվում. դրանք հիմնական օրենքներում ամրագրվում են որպես սոցիալական նպատակներ կամ սոցիալական մտադրություններ, որոնց իրականացմանը պետությունը պետք է աստիճանաբար հասնի¹: Այս առումով «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը պետություններին

¹ St' u «Права человека и основные свободы, на защиту которых направлена конституционная жалоба: вариативность подходов», М. Гултай, Конституционное правосудие, 2(60)13:

պարտավորեցնում է իրենց առկա միջոցների շրջանակներում աստիճանաբար ապահովել դաշնագրում ճանաչված իրավունքների իրականացումը: Մակայն, եթե առանձին սոցիալական իրավունքների ապահովումից կախված է հիմնական ճանաչված կյանքի իրավունքը, կարծում ենք՝ սոցիալական հոչակված պետությունները պետք է առանձին նվազագույն պայմաններ երաշխավորեն յուրաքանչյուրի համար:

Թեև Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված կյանքի իրավունքի շրջանակներում բժշկական ծառայությունների իրավունքին վերաբերող դիմումներ չի ստացել, սակայն Մարդու իրավունքների հարցերով Եվրոպական հանձնաժողովը նախկինում ընդունել է մի շարք որոշումներ, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ ապագայում բժշկական ծառայությունների իրավունքը Եվրոպական դատարանում կարող է քննարկման առարկա դառնալ կյանքի իրավունքի շրջանակներում: Օրինակ՝ «Association X v. UK» գործով, որտեղ դիմողները դժգոհել են առողջապահության ոլորտի թերություններից, Մարդու իրավունքների հարցերով Եվրոպական հանձնաժողովը նշել է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածը պետություններին ոչ միայն պարտավորեցնում է ձեռնպահ մնալ կյանքից դիտավորյալ գրկելուց, այլև իրականացնել կյանքի պաշտպանությանն ուղղված միջոցառումներ¹: Մա վկայում է, որ պետությունները կյանքի իրավունքի համար որոշակի պատասխանատվություն են կրում նաև բժշկական ծառայությունների ոլորտում՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

Կոնվենցիայի 1-ին հոդվածից բխում է պետության պարտավորությունը ներպետական օրենսդրությամբ սահմանելու կյանքի իրավունքի պահպանմանն ուղղված իրավական նորմեր: Կյանքի իրավունքի պահպանմանն ուղղված պետության պոզիտիվ պարտականությունները ենթադրում են, որ պետությունը պետք է ձեռնարկի կանխարգելիչ օպերատիվ միջոցառումներ այն անձանց պաշտպան-

¹ Sté u Standardy Evropskeho suda po pravam človeka i ruskaja pravoprimenitel'naja praktika, sbornik analitičeskich statej, pod red. M. P. Voskobitovoj, էջ 79, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի «X v. The United Kingdom» գործը (Գանգատ թիվ 7215/75, 5.11.1981 թ.):

նության համար, որոնց կյանքը վտանգված է¹: Միաժամանակ, Եվրոպական դատարանը նշում է, որ նման պարտավորությունները չպետք է այնպես մեկնաբանվեն, որ պետության վրա դրվեն չափազանց կամ անիրագործելի բեռ: Առանձին անձանց կամ անձանց խմբերի պաշտպանությանն ուղղված կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու պետության պոզիտիվ պարտավորությունը ծագում է այն դեպքում, երբ իշխանությունները գիտեին կամ պարտավոր էին իմանալ կյանքին սպառնացող իրական և անմիջական վտանգի մասին, որը կապված է երրորդ անձանց հանցավոր գործողությունների հետ: Եթե նման իրավիճակում իշխանությունները իրենց լիազորությունների շրջանակներում միջոցներ չեն ձեռնարկել, որի արդյունքում հնարավոր կլիներ խուսափել վտանգից, ապա առկա է կյանքի իրավունքի խախտում²:

Այլ է խնդիրը, երբ անձը չի դիմում պետության օգնությանը կամ տարաբնույթ հիմքերով չի ցանկանում օգտվել այդպիսի պաշտպանությունից: Արդյո՞ք պետությունը պարտավոր է իր նախաձեռնությամբ միջոցներ ձեռնարկել խոցելի վիճակում գտնող թափառաշրջիկ անձանց կյանքի պաշտպանության ուղղությամբ, երբ պետության կողմից սահմանված պայմանների դեպքում վերջիններս չեն դիմել կամ պարզապես չեն ցանկանում օգտվել այդպիսի պաշտպանությունից: Արդյո՞ք պետությունն իրավունք ունի հարկադրանքի կիրառմանը դիմել կյանքին սպառնացող անմիջական վտանգի դեպքում, երբ թափառաշրջիկ անձը հրաժարվում է պետության աջակցությունից:

Այստեղ առաջ է գալիս մահվան իրավունքի առկայության հարցն ընդհանրապես: Բանն այն է, որ կյանքի իրավունքից ուղղակիորեն չի բխում նաև մահվան իրավունքը: Ավելին, միջազգային հանրության կողմից մահվան իրավունքի գոյության և դրա թույլատրելիության վերաբերյալ հստակ և միասնական մոտեցում չի ձևավորվել: Կյանքի և մահվան իրավունքների, դրանց փոխհարաբերությունների վերաբերյալ հարցերը քննարկման առարկա են դառնում

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Osman v. United Kingdom» գործը, կետ 115 (Գանգատ թիվ 87/1997/871/1083, 28.10.1998թ.):

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Osman v. United Kingdom» գործը (Գանգատ թիվ 87/1997/871/1083, 28.10.1998թ.): «Oneryildiz v. Turkey» գործը, (Գանգատ թիվ 48939/99, 18.06.2002թ.):

հիմնականում էվթանագիայի թույլատրելիության հարցի շրջանակներում:

Իրավական տեսանկյունից էվթանագիան անհույս և անբուժելի հիվանդին կյանքից դիտավորյալ գրկելն է՝ վերջինիս տառապանքները թեթևացնելու նպատակով: Էվթանագիայի կիրառության վերաբերյալ պետությունների մոտեցումները տարբերվում են: Այդուհանդերձ, Եվրոպական դատարանը կյանքի իրավունքի խախտում չի համարել պետությունների կողմից էվթանագիայի կիրառումը: Մակայն էվթանագիայի կիրառման թույլատրելիությունից չի կարող անմիջականորեն բխեցվել մահվան իրավունքն ընդհանրապես¹: Այն իրենից ներկայացնում է մահվան իրավունքի որոշակի դրսևորում: Բանն այն է, որ էվթանագիան կիրառվում է միայն որոշակի խումբ անձանց նկատմամբ և խիստ սահմանված հիմքերի առկայության պարագայում: Ավելին, էվթանագիայի դեպքում շեշտը դրված է մարդասիրական կողմի վրա: Մասնավորապես՝ էվթանագիան թույլատրվում է այն հիվանդների նկատմամբ, որոնք կրում են ծանր ֆիզիկական և հոգեկան տառապանքներ, հույս չկա, որ հիվանդը կկազդուրվի, և այդ հանգամանքը հաստատվել է բժշկական եզրակացությամբ: Ընդ որում, հիմնականում թույլատրելի է համարվում պասիվ կամ նեգատիվ էվթանագիան, այսինքն՝ հիվանդի կյանքը պահպանելուն նպաստող գործողություններից հրաժարվելը²: Մահվան իրավունքի վերաբերյալ պետությունների բացասական վերաբերմունքի մասին է վկայում «ինքնասպանության հասցնել» և «ինքնասպանության հակել» որակվող արարքների քրեականացումը:

Վերոգրյալը վկայում է, որ մահվան իրավունք որպես այդպիսին գոյություն չունի, այլ առկա են միայն որոշ բացառություններ, որոնք թույլատրվում են միայն որոշակի խումբ անձանց նկատմամբ և օրենքով խիստ սահմանված դեպքերում: Հետևաբար՝ թափառաշրջիկ անձանց կողմից իրենց կյանքին սպառնացող վտանգի դեպքում պետության օգնությանը չդիմելը կամ դրանից հրաժարվելը չի կարող մեկնաբանվել որպես կյանքի իրավունքից հրաժարում և հիմք տալ պետական մարմիններին ձեռնպահ մնալու կյանքի

¹ St´ u Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Pretty v. The United Kingdom» գործը, կետ 40 (Գանգատ թիվ 2346/02, 29.04.2002թ.)

² St´ u Эвтаназия: этико-правовые аспекты. Е. И. Вингловская, к. юрид.н., профессор; Д. А. Мкртычян:

պաշտպանությանն ուղղված ակտիվ գործողություններից:

Այսպիսով, ՀՀ Սահմանադրության ներկա իրավակարգավորման պայմաններում թափառաշրջիկ անձանց նկատմամբ հարկադրանք կարող է կիրառվել միայն հասարակական վտանգի առկայության դեպքում: Մինչդեռ ազատությունից զրկելը նպատակաուղղված չէ միայն հանրության շահերի պաշտպանությանը. այն թելադրված է նաև մասնավոր շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ: Ուստի այն հանգամանքը, որ թափառաշրջիկությունը չի համարվում վարչական զանցանք, այդուհանդերձ, այդ հանգամանքը չի վերացնում վերջիններիս նկատմամբ Կոնվենցիան կիրառելու անհրաժեշտությունը՝ նրանցից բխող հասարակական վտանգը կանխելու կամ իրենց իսկ շահերը պաշտպանելու նկատառումներով:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 05.10.2015 թ. հավանության արժանացած ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծով պետության պաշտպանության շրջանակներից դուրս են թողնվել հասարակության՝ խոցելի վիճակում գտնվող առանձին խումբ անձինք, որոնց սահմանադրական և կոնվենցիոն իրավունքների, մասնավորապես՝ կյանքի իրավունքի պաշտպանությունը պետության պարտականությունն է: Ուստի ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածում թափառաշրջիկ անձանց նախատեսումը հետապնդում է իրավաչափ նպատակներ և ներկայումս էլ չի կորցրել իր արդիականությունը:

Մյուս կողմից, օրենսդիրը պետք է որոշակիացնի նաև ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածով նախատեսված անձանց նկատմամբ հարկադրանք կիրառելու և ազատությունից զրկելու նպատակները և ընթացակարգը, որոնք օրենսդիր և իրավակիրառ մարմինների համար պետք է ուղենիշ հանդիսանան իրենց լիազորություններն իրականացնելիս, իսկ վարչական մարմինները յուրաքանչյուր դեպքում պետք է անհատական մոտեցում ցուցաբերեն՝ հիմնավորելով, որ թափառաշրջիկ անձանց նկատմամբ ուժի կիրառումը և ազատությունից զրկելը կամ դրա սահմանափակումը հետապնդում է օրինական նպատակներ և հանդիսանում նշված նպատակներին հասնելու միակ հնարավոր և արդյունավետ միջոցը:

Թափառաշրջիկությունից բխող թե՛ հասարակական, թե՛ վերջիններիս սպառնացող վտանգը կանխելու համար նախ անհրաժեշտ

է պարզել դրա առաջացման պատճառները: Այդ պատճառները բազմազան են. սպիրտային խմիչքներից կամ թմրանյութերից կախվածություն, հաշմանդամություն, հոգեկան խանգարումներ, միգրացիա, տնտեսական խնդիրներ և այլն¹: Թափառաշրջիկ անձանց շարքում որոշ թիվ են կազմում նաև ազատագրկման վայրերից հասարակություն վերադարձած անձինք, որոնք կորցրել են ընտանիքի հետ սոցիալական կապերը: Թափառաշրջիկ անձինք հաճախ պարզապես օրինապահ քաղաքացիներ են, ովքեր այդ քայլին են դիմել հարկադրված: Բոլոր դեպքերում, երևույթի առաջացման պատճառների բացահայտումը հնարավորություն կտա ընտրել երևույթի հակազդմանը համարժեք միջոցներ:

Իհարկե, թափառաշրջիկներից բխող հասարակական վտանգը տեսականորեն կարելի է կանխել նաև իրավական պատասխանատվության միջոցների կիրառմամբ, սակայն եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որը պատասխանատվության սուբյեկտները նյութապես անապահով անձինք են, որոնց նկատմամբ կիրառվելիք վարչական կամ քրեաիրավական տուգանքների գանձումն գործնականում անհնարին է, իսկ պատասխանատվության առավել խիստ միջոցների կիրառումը, որոնք կապված են ազատությունից զրկելու հետ, համարժեք չեն լինի կատարված արարքի ծանրությանը, ուստի թափառաշրջիկ անձանց վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելը դառնում է իմաստագուրկ:

Մյուս կողմից, իրավական պատասխանատվության միջոցների կիրառումը կարող է հավակնել միայն խնդրի լուծման ժամանակավոր արդյունքների: Բանն այն է, որ թափառաշրջիկությունն ունի առաջացման իր կոնկրետ պատճառները, որոնք էլ անձանց հարկադրում են թափառաշրջիկության, իսկ այդպիսի երևույթի հետևանքների հաղթահարումը թափառաշրջիկ անձանց հնարավորությունների սահմաններից դուրս է: Ուստի հարկադրանքի կիրառման հետ միաժամանակ պետությունը պետք է նաև հետևանքները վերացնելուն կամ դրանք մեղմելուն ուղղված միջոցներ ձեռնարկի:

Այսպիսով, թափառաշրջիկությունից բխող բացասական

¹ St' u Кризис личности: к вопросу о социально-правовом статусе лиц без определенного места жительства, О. В. Головань (<http://do.teleclinica.ru/184410/>). Бездомность в современной России: Проблема типологии бездомных, В. В. Волков.

երևույթները հնարավոր է կանխել կամ վերացնել միայն վարչական հարկադրանքի և դրա հետ զուգակցվող և վտանգի կոնկրետ տեսակով պայմանավորված իրավական միջոցների կիրառմամբ:

Թեև վարակիչ հիվանդ, գինեմոլ, թմրամոլ հոգեկան հիվանդ և թափառաշրջիկ անձանց նկատմամբ վարչական հարկադրանքի կիրառման իրավական հիմքը հասարակական վտանգի կանխումն է, այդուհանդերձ, յուրաքանչյուր խմբի դեպքում հասարակական վտանգը հիմնականում յուրովի դրսևորումներ է ստանում: Օրինակ՝ գինեմոլ, թմրամոլ և հոգեկան անձանց բնորոշ է ագրեսիվ պահվածքը, որը նաև վարչական զանցանքի կամ հանցանքի վերաճելու մեծ ռիսկեր ունի: Վարակիչ հիվանդ անձանց պարագայում հասարակական վտանգը դրսևորվում է հիվանդության տարածման հնարավորության ձևով:

Բոլորովին այլ դրսևորումներ ունի հասարակական վտանգը թափառաշրջիկ անձանց դեպքում: Թափառաշրջիկ անձինք հաճախ «բնակություն» են հաստատում բնակելի, կրթական, արտադրական նշանակության և այլ շենքերի և շինությունների մուտքերում, դրանց հարող տարածքներում: Նման իրավիճակը մի կողմից անհարմարություններ է պատճառում նշված շինություններում բնակվող կամ դրանցից օգտվող անձանց: Մյուս կողմից, չի բացառում նաև նշված տարածքներում իրավախախտումների կատարման վտանգը: Սակայն զուտ անհարմարություն պատճառելու հանգամանքը դեռևս բավարար իրավական հիմք չէ վարչական հարկադրանքի կիրառման համար: Հարկադրանքի կիրառումը կարող է իրավաչափ համարվել, երբ թափառաշրջիկ անձինք խախտում են բնակիչների սեփականության իրավունքը կամ ցուցաբերում են ագրեսիվ պահվածք՝ վտանգելով հասարակական կարգի պահպանությունը¹:

Թափառաշրջիկությունը հաճախ ուղեկցվում է հաճախ թմրամոլությամբ, գինեմոլությամբ: Թափառաշրջիկ անձանց թվում հանդիպում են նաև հոգեկան խանգարումներ ունեցող անձինք: Վերջիններիս նկատմամբ վարչական հարկադրանք կիրառելու համար

¹ Սեփականության իրավունքի խախտման մասին կարող է խոսք գնալ հիմնականում բազմաբնակարան շենքերի դեպքում, որտեղ ընդհանուր օգտագործման տարածքները պատկանում են բնակիչներին՝ ընդհանուր սեփականության իրավունքով՝ «Բազմաբնակարան շենք կառավարման մասին» ՀՀ օրենքի:

հինք կարող է հանդիսանալ պահվածքի ազդեցիկությունը, որով նրանք ոտնձգում են այլ անձանց դեմ: Ազդեցիկ պահվածքը կարող է ընդհանրապես վարչական իրավախախտման կամ հանցագործության հատկանիշներ չպարունակել, սակայն այն կարող է այդպիսին վերածվելու վտանգ պարունակել: Նման պայմաններում պետությունը չպետք է պասիվ դիրք ընդունի՝ սպասելով հակաիրավական գործողությունների: Ընդհակառակը, առավել վաղ փուլում պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկվեն հանրային վտանգը կանխելու ուղղությամբ: Նշված խումբ անձանց նկատմամբ, կարծում ենք, կարող է իրավաչափ համարվել գինեմոլ, թմրամոլ և հոգեկան հիվանդ անձանց նկատմամբ կիրառման ենթակա հարկադրանքի այնպիսի միջոցի կիրառումը, ինչպիսին է հարկադիր բուժումը:

Թափառաշրջիկ անձանց դեպքում մեծ է հատկապես վարակիչ հիվանդությունների տարածվածության ռիսկը: Նրանք իրենց վարած կենսակերպի պատճառով ունեն հիվանդանալու առավել մեծ հավանականություն և համարվում են հիվանդությունների տարածման աղբյուր: Ուստի թափառաշրջիկ անձանց պարբերաբար պարտադիր բժշկական զննության ենթարկելն ինչպես հիվանդությունների տարածման վտանգը կանխելու, այնպես էլ թափառաշրջիկ անձանց կյանքին և առողջությանը սպառնացող վտանգը վերացնելու նպատակով լիովին արդարացված է:

Միաժամանակ, իրավական պետության պայմաններում հասարակության շահերի պաշտպանությունը չի կարող իրականացվել ի հաշիվ այլ անձանց իրավունքների խախտման: Մասնավորապես՝ պետությունը չի կարող թափառաշրջիկներին թողնել բախտի քմահաճույթին:

Թափառաշրջիկ անձինք խոցելի են հատկապես բնակլիմայական պայմանների նկատմամբ: Օդի ջերմաստիճանն այն հիմնական գործոններից է, որ զգալի ազդեցություն է ունենում մարդու օրգանիզմի կենսականորեն կարևոր գործառույթների իրականացման վրա՝ նյութափոխանակություն, արյան շրջանառություն և այլն: Անբարենպաստ եղանակն առաջին հերթին վնասում է անպաշտպան անձանց: Բիարկե, ցրտին և շոգին դիմակայելու օրգանիզմի ունակությունը յուրաքանչյուր մարդու մոտ տարբերվում է, որը թափառաշրջիկ անձանց դեպքում կարող է նաև սովորականից ավելի բարձր լինել մարդու՝ բնական պայմաններին հարմարվելու ունա-

կության շնորհիվ, սակայն գոյություն ունեն որոշակի սահմաններ, որոնք հատելու դեպքում վտանգավոր հետևանքների առաջացումն անխուսափելի է դառնում. միայն 2003 թ. ամռանը եվրոպայում կլիմայական փոփոխությունների պատճառով առաջացած ուժեղ շոգից գրանցվել է ավելի քան 70 000 մարդու մահ¹:

Մարդու համար որպես բարենպաստ միջավայր ապահովող ջերմաստիճան համարվում է +18-20° C-ը²: Նշված ջերմաստիճանի ինչպես բարձրացումն, այնպես էլ նվազումն ունակ է առաջացնելու բացասական հետևանքներ: Սակայն որպես կյանքի և առողջության համար վտանգավոր ջերմաստիճան ընդունված է համարել -40° C-ից ցածր և +60° C-ից բարձր ջերմաստիճանը³: Նման եղանակային պայմանների դեպքում իրականացվում է աշխատաժամանակի նորմավորում, իսկ դրսում կատարվող աշխատանքները, որպես կանոն, դադարեցվում են: Օրինակ՝ Կանադայում արտադրական հիգիենայի մասնագետների ամերիկյան կոնֆերանսն (ACGIH) ընդունել է առանձին հիմնադրույթներ ցուրտ եղանակային պայմանների դեպքում բացօթյա կատարվող աշխատանքների համար, ըստ որի -43° C-ի դեպքում դրսում կատարվող աշխատանքները ծայրահեղ անհրաժեշտության բացակայության դեպքում ենթակա են դադարեցման: Իսկ Կանադայի՝ եղանակի տեսությունը ներկայացնող ծառայությունը եղանակային շոգ պայմանների վերաբերյալ հանրության ծանուցելու նպատակով կիրառում է որոշակի աղյուսակ, ըստ որի՝ եթե 40-45° C աստիճան ջերմաստիճանը համարվում է մարդու համար անհարմարավետ, ապա +46° C աստիճանի դեպքում բազմաթիվ աշխատանքների իրականացումը պետք է սահմանափակվի⁴:

Ուստի ծայրահեղ եղանակային պայմանների դեպքում, երբ օդի ջերմաստիճանը ցածր է -40° C-ից կամ գերազանցում է +60° C-ը՝ անմիջականորեն վտանգելով թափառաշրջիկ անձանց կյանքն ու առողջությունը, պետությունը պետք է գործնական քայլերի դիմի վեր-

¹ St' u <http://www.whodc.mednet.ru/ru/component/attachments/download/85.html>:

² St' u Линченко С. Н., Хан В. В., Грушко Г. В., К вопросу об адаптации человека в меняющихся метеорологических условиях. <http://www.rae.ru/use/pdf/2010/5/11.pdf>

³ St' u <http://fullpicture.ru/zdorove/skolko-mozhet-vyderzhat-chelovecheskoe-telo.html>:

⁴ St' u http://www.ccohs.ca/oshanswers/phys_agents/hot_cold.html:

ջիններիս ժամանակավոր կացարաններով ապահովելու ուղղությամբ¹:

Միաժամանակ, կարծում ենք՝ անհրաժեշտ է համալիր լուծումներ առաջադրել վերոհիշյալ խնդրի՝ նաև կառուցակարգային բաղադրիչները ողջամտորեն ձևավորելու տեսանկյունից: Մասնավորապես, երբ խոսում ենք թափառաշրջիկներին կացարաններում տեղավորելու անհրաժեշտության մասին, ապա հարկ է ոչ միայն անդրադառնալ այդ գործընթացների իրավական հիմքերի մշակմանը, այլև կոնկրետ կացարաններ, համապատասխան անձնակազմ և այլ օժանդակ միջոցներ ձևավորելու խնդիրներին:

Асмик Сардарян

Аспирант кафедры конституционного права ЕГУ

СОВРЕМЕННЫЕ ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ПРИМЕНЕНИЯ АДМИНИСТРАТИВНОГО ПРИНУЖДЕНИЯ К БРОДЯГАМ

Бродяги, как уязвимый слой общества, характеризуются неопределенным правовым статусом. Тем не менее, отношения, возникающие от их фактического статуса, требуют правовое регулирование. В свете прецедентного права Европейского суда по правам человека в статье обсуждаются вопросы законности применения административного принуждения, как таковой рассматривая вопросы о необходимости предотвращения возникающей от них общественной опасности и защиту собственных интересов. Предпринята попытка более подробно определить основания применения принуждения, уточнить границы ответственности государства как по защите прав бродяг, так и в правоотношениях связанных с вопросами защиты общественного строя. При обсуждении вопроса бродяги были приняты во внимание как нынешние конституционные регулирования, так и возможные решения, предлагаемые в рамках правового регулирования проекта поправок к Конституции.

Hasmik Sardaryan

¹ Կարծում ենք՝ կյանքի և առողջության համար վտանգավոր ջերմաստիճանի սահմանային չափը պետք է սահմանվի՝ հիմք ընդունելով բժշկական և այլ մասնագիտական հիմնավորումները:

CONTEMPORARY LEGAL ISSUES OF APPLICATION OF ADMINISTRATIVE ENFORCEMENT REGARDING THE VAGRANTS

The vagrants as a vulnerable group of society are characterized by uncertain legal status. Meanwhile the legal relations arising from their actual status require legal regulation. In the light of the case law of the European Court of Human Rights the article addresses the application of the lawfulness of administrative enforcement against the vagrants, considering the need to prevent the public danger arising from them addressing as such and the protection of their own interests. We are trying to define detailed grounds for the application of administrative enforcement, clarify the boundaries of state responsibility both in the protection of the rights of vagrants and legal relations related to the protection of public order. In tackling the issue of vagrants both the current constitutional arrangements and the possible solutions within the legal regulation of draft amendments to the Constitution were taken into account.

Բանալի բառեր՝ թափառաշրջիկ, վարչական հարկադրանք, հանրային վտանգավորություն, սեփական շահերի պաշտպանություն, կյանքի իրավունք, մահվան իրավունք, սոցիալական իրավունքներ, իրավական պատասխանատվություն

Ключевые слова: бродяга, административное принуждение, общественная опасность, защита собственных интересов, право на жизнь, право на смерть, социальные права, юридическая ответственность

Keywords: vagrant, administrative enforcement, public danger, protection of own interest, right of life, right of death, social rights, legal responsibility